

6. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների ներդրման աշխատանքներն իրականացվել են Եռամյա ծրագրին և Խորհրդի կողմից 2003թ. ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգ»-ին համապատասխան:

Ծառայության կորպորատիվ համակարգչային ցանցի կառուցմամբ պայմանավորված, աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում շարունակվել են տեղային համակարգչային ցանցի արդիականացման աշխատանքները: Ցանցին միացվել են գործող և տեխնիկական պահանջներին համապատասխանող բոլոր (թվով 170) համակարգիչները: Ծառայության աշխատակազմի մարզային գործակալություններում շարունակվել են տեղային համակարգչային ցանցերի ստեղծման, ընդլայնման և արդիականացման աշխատանքները. 6 մարզային գործակալությունում ստեղծվել, իսկ 4-ում ընդլայնվել են տեղային համակարգչային ցանցերը: Աշխատակազմի 9 մարզային գործակալություններ և տարածքային ստորաբաժանումներ միացվել են փոստային «Մեյլ»-սերվերին /armstat.am/: 15 կետով ընդլայնվել է մոդեմային կապը:

Ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում «Վինդոուս-2000» սերվերի կառավարմամբ շահագործվել է «ԷնԷսԷս Դոմեն» դոմենային միջավայրը, որն ապահովել է ցանցի կենտրոնացված կառավարումը և ցանցի աշխատանքի հուսալիությունը: Ներդրվել է դոմենային սերվերից կառավարվող հակավիրուսային փաթեթ և կառուցվածքային ստորաբաժանումներում կատարվել համակարգիչների հակավիրուսային ծրագրերի արդիականացում: Ներդրվել է ծրագրային փաթեթների ավտոմատ տեղակայման հնարավորություն:

Շարունակվել է www.armstat.am և <http://docs.armstat.am/nsdp> ինտերնետային կայքերի վարումն ու Ազգային ամփոփ տվյալների էջի կառավարումը: Ինտերնետային կապի որակի բարձրացման նպատակով 2005թ. տեղակայվել է <http://docs.armstat.am/nsdp> կայքի հայելային արտապատկերումը <http://docs.armstat.info/nsdp> հասցեով:

2006թ. ընդլայնվել է ինտերնետային հրապարակումների բազան 2001 թվականին նախորդող ժամանակաշրջանների առկա վիճակագրական հրապարակումներով: Վարվել է ինտերնետային կայքից գրադարանային էլեկտրոնային տեղակազիրքը: Հաշվետու ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ Ծառայության ինտերնետային կայքում տեղադրվել է թվով 481 վիճակագրական նյութ (այդ թվում՝ 2004թ.՝ 78, 2005թ.՝ 187, 2006թ.՝ 216):

Վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջմունքները բավարարելու նպատակով աշխատանքներ են իրականացվել Ծառայության ինտերնետային կայքի արդիականացման ուղղությամբ, մասնավորապես բարեփոխվել են նյութերի ցուցադրման, պահպանման և տարածման տեխնոլոգիաները: Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ շահագործվել են թվով 68 տվյալների բազաներ, ստեղծվել են վիճակագրական տարբեր ոլորտների տվյալների մշակման 21 նոր համալիրներ (այդ թվում՝ ըստ տարիների. 2004թ.՝ 8, 2005թ.՝ 8, 2006թ.՝ 5), կատարվել թվով 117 փոփոխություններ (այդ

թվում՝ ըստ տարիների. 2004թ.՝ 45, 2005թ.՝ 30, 2006թ.՝ 42): Մշակվել են ծրագրեր հաշվապահական հաշվառման և անձնակազմի գործերի կառավարման համար:

«ԷսԶյուԷլ-2000» սերվերի վրա վարվել է դասակարգիչների բազան, որը ներառել է վարչատարածքային բաժանման, երկրների, կազմակերպա-իրավական ձևերի, Տնտեսական գործունեության տեսակների և Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների դասակարգիչները:

Վիճակագրական տվյալների հիմնապաշարների (Վերհաուզ) մշակման աշխատանքների շրջանակում ֆինանսների, արդյունաբերության և տրանսպորտի վիճակագրության ոլորտներում շարունակվել են կառուցվածքի մշակման և սերվերում տեղադրման ֆակտ-աղյուսակների աշխատանքները: Մշակվել է ծրագիր տեղային տվյալների բազաներից վիճակագրական տվյալների հիմնապաշար տեղեկատվության տեղափոխման համար, արդիականացվել է վիճակագրական տվյալների ստացման համար նախատեսված ծրագիրը:

Վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների և վիճակագրական տեղեկությունների տրամադրողների կողմից կիրառելու և աշխատանքների օպերատիվության ապահովման նկատառումներով պայմանավորված, մշակվել և վերջիններիս (թվով 68) է տրամադրվել «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» պետական վիճակագրական հաշվետվության ձևի լրացման էլեկտրոնային տարբերակը:

Հրապարակումների համար ստեղծվել են 152 քարտեզներ «Արք-Վյու-8» քարտեզագրական ծրագրային փաթեթի կիրառմամբ, այդ թվում՝ 2004թ.՝ 81, 2005թ.՝ 50, 2006թ.՝ 21: Ծառայության աշխատակազմի աշխատակիցների հետ անց է կացվել ԱՏՀ և ԷսՓիԷսԷս ծրագրային փաթեթների ուսուցում:

Շարունակվել են վիճակագրական տեղեկատվության էլեկտրոնային արխիվացման աշխատանքները:

Իրականացվել են անհրաժեշտ միջոցառումներ Ծառայության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների տեղային համակարգչային ցանցերի և համակարգչային սարքավորումների անխափան աշխատանքի ապահովման ուղղությամբ: